ԱՐՓԻՆԵ ԱԲՈՎՅԱՆ
Տնտեսագիտություն,
բակալավրիատ, 2-րդ կուրս

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. *արտահանման համեմատական առավելություն, արտահանման կառուցվածք, ապրանքային բաժիններ, ներճյուղային մասնագիտացման գործակից, արտահանման մասնագիտացման հարաբերական գործակից*

Տնտեսական աճի, կենսամակարդակի բարձրացման և միջազգային տնտեսական միասնացման (ինտեգրման) ապահովման հիմնական ուղիներից մեկը արտահանման ծավալների ընդլայնումն ու կառուցվածքի օպտիմալացումն է: Այդ նպատակով անհրաժեշտ է բացահայտել, թե արտադրվող ապրանքատեսակներից որոնց գծով է երկիրը դրսևորում համեմատական առավելություններ: Սույն հոդվածում վերլուծվել է ՀՀ արտահանման կառուցվածքը, տրվել են համեմատական առավելությունների գնահատականներ, դասակարգվել են այն ապրանքախմբերը, որոնց գծով ՀՀ-ն ունի արտադրության և արտահանման ծավալների ընդլայնման որոշակի ներուժ:

Վերջին տարիներին արձանագրվում է ՀՀ արտահանման ծավալների անընդհատ աճ՝ բացառությամբ 2008-2009 թթ. ճգնաժամային տարիների[1]: Եթե հաշվի առնենք, որ արտահանման աճն ու առևտրի աշխուժացումը պայմանավորված են շուկայական տնտեսությանը բնորոշ կառուցակարգերով, ապա կարելի է ենթադրել, որ արտահանման շարժընթացը ու կառուցվածքը բացատրվում են որոշ ապրանքատեսակների գծով ՀՀ արտահանման համեմատական առավելություններով:

Երկրի մրցունակությունը գնահատելու համար անհրաժեշտ է առաջին հերթին բացահայտել նրա ունեցած համեմատական առավելությունները, որի համար անհրաժեշտ է հաշվարկել **ներճյուղային մասնագիտացման գործակիցը** (**ՆՄԳ**):

$$\text{ՆՄԳ} = \frac{\text{Ա-Ն}}{\text{Ա+Ն}},$$

որտեղ՝ Ա- ն՝ տվյալ ճյուղի արտահանման ծավալ,
Ն- ն՝ տվյալ ճյուղի ներմուծման ծավալ:

Այս ցուցանիշը տատանվում է [–1;+1] սահմաններում: Եթե ճյուղի ներմուծման մասնագիտացման գործակիցը տատանվում է [0;+1] սահմաններում, ապա երկիրն օժտված է տվյալ ապրանքի արտադրության համեմատական առավելություններով: Հակառակ դեպքում երկիրն ավելի շատ (կամ ամբողջությամբ, եթե գործակիցը հավասար է –1-ի) ներմուծում է տվյալ արտադրանքը, այսինքն՝ չունի համեմատական առավելություն:

Հաշվարկները ցույց են տալիս, որ ՀՀ-ն ունի համեմատական առավելություն 9 ապրանքատեսակների նկատմամբ: Ընդ որում, «հում կաշի, չմշակ-

[1] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ժամանակագրական շարքեր, արտահանում, http://armstat.am/am/?nid=126&id=10003:

ված մորթիներ» և «մետաղ պարունակող հանքանյութեր և մետաղի ջարդոն» ապրանքախմբերի գծով ՀՀ-ն գրեթե ներմուծում չի իրականացնում, և ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածում արձանագրվում է ներճյուղային մասնագիտացման շատ բարձր ցուցանիշ: Ուշադրության են արժանի նաև այն ապրանքախմբերը, որոնց գծով ներճյուղային մասնագիտացման գործակիցը միայն վերջին մի քանի տարիներին է արձանագրել դրական ցուցանիշ («ոսկի՝ ոչ դրամական (բացառությամբ ոսկու հանքաքարի և կոնցետրատների)», «ծխախոտ և ծխախոտային արտադրանքներ» և «կենդանի կենդանիներ (առանց 03 բաժնի)») (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ արտաքին առևտրի ներճյուղային մասնագիտացման գործակիցը,
*2010-2016 **թթ.*** [1]

Ապրանքային խումբ	Ապրանքային խմբի անվանումը	Ներճյուղային մասնագիտացման գործակից (ՆՄԳ)						
		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
21	Հում կաշի, չմշակված մորթիներ	0.93	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00
28	Մետաղ պարունակող հանքանյութեր և մետաղի ջարդոն	0.97	0.96	0.99	0.98	0.98	0.99	0.99
97	Ոսկի՝ ոչ դրամական (բացառությամբ ոսկու հանքաքարի և կոնցետրատների)	-0.24	0.02	-0.04	-0.42	-0.30	0.62	0.65
11	Խմիչքներ	0.31	0.41	0.49	0.52	0.50	0.41	0.50
68	Գունավոր մետաղներ	0.34	0.41	0.39	0.33	0.33	0.31	0.41
35	Էլեկտրական հոսանք	0.63	0.75	0.84	0.82	0.75	0.75	0.40
12	Ծխախոտ և ծխախոտային արտադրանքներ	-0.85	-0.72	-0.41	-0.25	0.12	0.31	0.32
03	Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ	0.16	0.32	0.54	0.63	0.68	0.46	0.21
00	Կենդանի կենդանիներ (առանց 03 բաժնի)	0.17	-0.23	0.17	-0.08	0.27	0.22	0.05

ՀՀ արտահանման մասնագիտացման ուղղվածությունը գնահատելու համար օգտվենք արտահանման մասնագիտացման հարաբերական գործակցից (ԱՄՀԳ).

$$\text{ԱՄՀԳ} = \frac{\text{Ա}_{\text{Ե}}}{\text{Ա}_{\text{Հ}}},$$

որտեղ՝ $\text{Ա}_{\text{Ե}}$ -ն՝ ապրանքի տեսակարար կշիռը երկրի արտահանման ծավալում,

$\text{Ա}_{\text{Հ}}$ -ն՝ ապրանքի տեսակարար կշիռը համաշխարհային արտահանման մեջ:

Երկիրը համարվում է որևէ ապրանքի արտահանման մեջ մասնագիտացված, եթե տվյալ ապրանքի՝ երկրի արտահանման մեջ տեսակարար կշիռը գերազանցում է համաշխարհային արտահանման մեջ տեսակարար կշռին: Երկիրն ունի համեմատական առավելություն, եթե այս գործակիցը գերազանցում է 1-ը:

[1] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2016 թ.:

Աղյուսակ 2

ԱՄՀԳ՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման, 2010-2016 թթ.[1]

Ապրանքային խումբ	Ապրանքային խմբի անվանումը	Արտահանման մասնագիտացման հարաբերական գործակից (ԱՄՀԳ)						
		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
12	Ծխախոտ և ծխախոտային արտադրանքներ	3.09	4.60	10.67	18.96	30.21	44.18	39.12
28	Մետաղ պարունակող հանքանյութեր և մետաղի ջարդոն	9.11	8.20	8.50	10.89	13.06	19.11	19.12
11	Խմիչքներ	20.00	20.19	25.61	26.77	22.16	12.93	14.97
35	Էլեկտրական հոսանք	15.21	22.06	19.14	18.67	17.76	18.04	11.40
68	Գունավոր մետաղներ	8.91	7.19	7.54	7.19	6.43	6.39	5.22
97	Ոսկի՝ ոչ դրամական (բացառությամբ ոսկու հանքաքարի և կոնցենտրատների)	3.30	3.83	2.61	2.02	3.28	3.71	3.65
66	Ոչ մետաղական հանքային նյութեր	5.90	5.58	4.82	5.13	5.08	2.67	3.38
84	Հարդարանքի միջոցներ և հագուստի լրացուցիչ պարագաներ	0.75	0.84	0.98	1.36	1.69	1.93	2.17
67	Երկաթ և պողպատ	4.89	3.29	2.92	3.17	2.95	1.98	1.71
21	Հում կաշի, չմշակված մորթիներ	0.48	0.69	1.01	0.61	1.33	1.63	1.32
27	Չվերամշակված պարարտանյութեր՝ առանց 56 բաժնի և չվերամշակված հանքային նյութերի (բացի ածուխից, նավթից և թանկարժեք քարերից)	1.89	1.69	2.01	1.85	1.25	1.11	1.24
05	Մրգեր և բանջարեղեն	1.50	1.94	2.91	3.25	2.61	1.99	1.16
00	Կենդանի կենդանիներ (առանց 03 բաժնի)	6.84	2.35	3.73	3.75	4.35	3.68	0.97
88	Օպտիկական, լուսանկարչական սարքեր և ապարատներ, ժամացույցներ (պատի և ձեռքի)	0.56	0.64	1.13	1.15	1.08	1.10	0.81
02	Կաթնամթերք և թռչնի ձու	0.47	1.99	1.25	1.06	1.16	3.08	0.37
03	Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ	1.31	1.85	2.64	3.59	2.99	1.36	0.30

Աղյուսակ 3

Մասնագիտացման բարձր ցուցանիշ արձանագրած ապրանքախմբերի դասակարգումն ըստ խմբերի

Ապրանքային խումբ	Ապրանքային խմբի անվանումը	Ներմուծման մասնագիտացման գործակից							Արտահանման մասնագիտացման հարաբերական գործակից						
		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
ԽՈՒՄԲ 1															
28	Մետաղ պարունակող հանքանյութեր և մետաղի ջարդոն	0.97	0.96	0.99	0.98	0.98	0.99	0.99	9.11	8.20	8.50	10.89	13.06	19.11	19.12
11	Խմիչքներ	0.31	0.41	0.49	0.52	0.50	0.41	0.50	20.00	20.19	25.61	26.77	22.16	12.93	14.97
68	Գունավոր մետաղներ	0.34	0.41	0.39	0.33	0.33	0.31	0.41	8.91	7.19	7.54	7.19	6.43	6.39	5.22
35	Էլեկտրական հոսանք	0.63	0.75	0.84	0.82	0.75	0.75	0.40	15.21	22.06	19.14	18.67	17.76	18.04	11.40
03	Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ	0.16	0.32	0.54	0.63	0.68	0.46	0.21	1.31	1.85	2.64	3.59	2.99	1.36	0.30
ԽՈՒՄԲ 2															
12	Ծխախոտ և ծխախոտային արտադրանքներ	-0.85	-0.72	-0.41	-0.25	0.12	0.31	0.32	3.09	4.60	10.67	18.96	30.21	44.18	39.12
97	Ոսկի՝ ոչ դրամական (բացառությամբ ոսկու հանքաքարի և կոնցենտրատների)	-0.24	0.02	-0.04	-0.42	-0.30	0.62	0.65	3.30	3.83	2.61	2.02	3.28	3.71	3.65
66	Ոչ մետաղական հանքային նյութեր	-0.28	-0.26	-0.23	-0.20	-0.26	-0.36	-0.25	5.90	5.58	4.82	5.13	5.08	2.67	3.38
84	Հարդարանքի միջոցներ և հագուստի լրացուցիչ պարագաներ	-0.60	-0.49	-0.45	-0.32	-0.30	-0.09	0.08	0.75	0.84	0.98	1.36	1.69	1.93	2.17
67	Երկաթ և պողպատ	-0.06	-0.04	-0.06	0.01	-0.01	-0.09	-0.05	4.89	3.29	2.92	3.17	2.95	1.98	1.71
27	Չվերամշակված պարարտանյութեր՝ առանց 56 բաժնի և չվերամշակված հանքային նյութերի (բացի ածուխից, նավթից և թանկարժեք քարերից)	-0.51	-0.43	-0.31	-0.38	-0.44	-0.42	-0.27	1.89	1.69	2.01	1.85	1.25	1.11	1.24
05	Մրգեր և բանջարեղեն	-0.55	-0.43	-0.13	-0.01	-0.16	-0.10	0.10	1.50	1.94	2.91	3.25	2.61	1.99	1.16
00	Կենդանի կենդանիներ (առանց 03 բաժնի)	0.17	-0.23	0.17	-0.08	0.27	0.22	0.05	6.84	2.35	3.73	3.75	4.35	3.68	0.97
88	Օպտիկական, լուսանկարչական սարքեր և ապարատներ, ժամացույցներ (պատի և ձեռքի)	-0.48	-0.44	-0.19	-0.06	-0.07	0.03	-0.04	0.56	0.64	1.13	1.15	1.08	1.10	0.81
02	Կաթնամթերք և թռչնի ձու	-0.89	-0.58	-0.69	-0.71	-0.69	-0.37	-0.72	0.47	1.99	1.25	1.06	1.16	3.08	0.37
ԽՈՒՄԲ 3															
21	Հում կաշի, չմշակված մորթիներ	0.93	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	0.48	0.69	1.01	0.61	1.33	1.63	1.32

[1] ՀՀ ԱՎԾ համապատասխան հաշվետվության արտաքին առևտուր 2016 թ. և UNCTAD–ի կողմից հրապարակվող վիճակագրական տվյալների հիման վրա՝ http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx?ReportId=24738:

Այսպիսով, ըստ արտահանման կառուցվածքի ուսումնասիրության և քննարկված գործակիցների՝ արտահանվող ապրանքատեսակները կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

ԽՈՒՄԲ 1 - ապրանքատեսակներ, որոնց գծով ՀՀ-ն տարիներ շարունակ ունեցել է համեմատական առավելություններ, այսինքն՝ վերջիններիս գծով ներճյուղային մասնագիտացման և արտահանման մասնագիտացման հարաբերական գործակիցները 2010-2016 թթ. ունեցել են կայուն ցուցանիշներ (տե՛ս աղյուսակ 3):

ԽՈՒՄԲ 2 - ապրանքատեսակներ, որոնց գծով ՀՀ արտահանման մասնագիտացման համար առկա են բարենպաստ պայմաններ և ներուժ: Խոսքը այն ապրանքատեսակների մասին է, որոնց արտահանման մասնագիտացման հարաբերական գործակիցը գերազանցում է 1-ը, սակայն ներճյուղային մասնագիտացման գործակիցը բացասական է, այլ կերպ ասած՝ արտահանման ծավալները դեռևս զիջում են ներմուծման ծավալներին: Վերջինս թույլ է տալիս ենթադրել, որ ՀՀ-ում առկա են տվյալ ապրանքների արտադրության մեջ մասնագիտանալու բարենպաստ պայմաններ, որը կարող է հանգեցնել նաև ներմուծման փոխարինման (տե՛ս աղյուսակ 3): Առավելապես ուշադրության է արժանանում «ծխախոտ և ծխախոտային արտադրանք» ապրանքախումբը, որի գծով արտահանման մասնագիտացման հարաբերական գործակիցը նշված ժամանակահատվածում դրսևորել է բազմապատիկ աճ, և որի գծով վերջին տարվա ընթացքում ՀՀ-ն ներմուծողից դարձել է արտահանող:

ԽՈՒՄԲ 3 - ապրանքատեսակներ, որոնց ներճյուղային մասնագիտացման մակարդակը բավականին բարձր է, սակայն համաշխարհային շուկայում մեր երկիրը չի դիտարկվում որպես տվյալ արտադրատեսակի արտադրության և արտահանման մեջ մասնագիտացված երկիր (տե՛ս աղյուսակ 3):

Հենց վերջին 2 խմբերն էլ այն ապրանքատեսակներն են, որոնց արտադրության և արտահանման համար առկա են մասնագիտանալու, համաշխարհային շուկայում որպես տվյալ ապրանքների արտադրության և արտահանման մեջ մասնագիտացված երկիր ներկայանալու բարենպաստ պայմաններ:

АРПИНЕ АБОВЯН

СРАВНИТЕЛЬНЫЕ ПРЕИМУЩЕСТВА ЭКСПОРТА РА

Ключевые слова: *сравнительное преимущество экспорта, структура экспорта, товарные категории, коэффициент внутриотраслевой специализации, относительный коэффициент специализации экспорта.*

Одним из основных путей достижения экономического роста, повышения уровня жизни и обеспечения международной экономической интеграции является увеличение объемов и оптимизация структуры экспорта. Для этого необходимо выявлять, в отношении какой из производимой продукции страна демонстрирует сравнительные преимущества. В данной статье была проанализирована структура экспорта РА, были даны оценки сравнительным преимуществам, на основе которых были сформулированы те товарные категории, для расширения объемов производства и экспорта которых РА обладает каким-либо потенциалом.

ARPINE ABOVYAN

COMPARATIVE ADVANTAGES OF EXPORT IN RA

Key words: *comparative advantages of export, export structure, commodity groups, intersectoral specialization index, revealed comparative advantage index.*

One of the main channels for ensuring economic growth, increase of living standards and global economic integration is export volume expansion and its structure optimization. For this purpose it is necessary to reveal the types of manufactured products related to which the country has comparative advantages in export. Within this article the patterns of RA's exports are studied, comparative advantage indices are estimated, based on which some commodity groups are revealed which provide evidence of potential for further expansionof production and export.

ԷՄՄԱ ԱԹԱՅԱՆ
Բանկային գործ,
բակալավրիատ, 4-րդ կուրս

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *բանկային համակարգ, ֆինանսական կայունություն, արտաքին և ներքին գործոններ, ռիսկեր, դրամավարկային քաղաքականություն*

ՀՀ բանկային համակարգը ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցն է, որին բաժին է ընկնում ֆինանսական ակտիվների գերակշիռ մասը: Այս պարագայում ֆինանսական հաստատությունների կայունության գնահատման տեսանկյունից առավելապես կարևորվում են հենց բանկային համակարգի գործունեության ռիսկերի բացահայտումն ու գնահատումը: Հոդվածում ներկայացվել են ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության վրա ազդող հիմնական գործոնները:

ՀՀ բանկային համակարգը մեր երկրի տնտեսության զարգացման գործընթացում կարևորագույն դերակատար է: Բանկային համակարգը տնտեսության մեջ հիմնական ֆինանսական միջնորդն է, և առանց դրա արդյունավետ և կայուն գործունեության, անհնարին է տնտեսության առաջընթաց զարգացումը:

Հայաստանի բանկային համակարգը երկմակարդակ է, որի առաջին մակարդակում ՀՀ կենտրոնական բանկն է, իսկ երկրորդ մակարդակում երկրի տարածքում գործող 17 առևտրային բանկերն են ու նրանց մասնաճյուղերը: Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների շուրջ 87,3%-ը:[1] Այս պարագայում ֆի-

[1] Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն 2017 թ. առաջին կիսամյակ, 2017թ., էջ 31: